



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻՂՐՈՇԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ

« 26 » 04 2021թ.

№ 08/ԼԱ/ - 247

2021թ. ապրիլի 19-25-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում

Ապրիլի 19-ին, 24-25-ին դիտվել է առանց տեղումների եղանակ: Ապրիլի 20-21-ին շրջանների զգալի մասում, 22-23-ին՝ տեղ-տեղ, դիտվել են տեղումներ: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Աշոցքում՝ 20մմ, Իջևանում՝ 12մմ, Սևանում, Տաշիրում և Վանաձորում՝ 11մմ, Ամասիայում՝ 10մմ: Մնացած շրջաններում կազմել է 2-8 մմ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը ապրիլի 19-20-ին նորմայից բարձր է եղել 5-8, 21-ին՝ 4-9, 22-ին՝ 6-10 (Լոռիում, Տավուշում՝ 2-4), 23-ին՝ 3-6, 24-ին՝ 3-5 (Լոռիում, Տավուշում՝ նորմայի սահմաններում), 25-ին՝ 3-7 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Սյունիքի հովիտներում՝ $+31...+34^{\circ}\text{C}$, Արարատյան դաշտում՝ $+30...+32^{\circ}\text{C}$ և Երևանում գրանցվել է $+27...+30^{\circ}\text{C}$, Կոտայքի, Արագածոտնի, Վայոց Ձորի նախալեռներում՝ $+25...+30^{\circ}\text{C}$, Սյունիքի նախալեռներում՝ $+25...+26^{\circ}\text{C}$, Տավուշում՝ $+24...+28^{\circ}\text{C}$, Լոռիում՝ $+22...+25^{\circ}\text{C}$, Շիրակում, Կոտայքի և Վայոց Ձորի լեռներում՝ $+20...+25^{\circ}\text{C}$, Գեղարքունիքում, Արագածոտնի լեռներում՝ $+18...+22$ աստիճան տաքություն:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է Շիրակում, Լոռիում, Արագածոտնի լեռներում՝ $0...+5^{\circ}\text{C}$ (Ծաղկահովիտում՝ -1°C), Գեղարքունիքում, Կոտայքի, և Վայոց Ձորի լեռներում $+1...+6^{\circ}\text{C}$ (Մասրիկում՝ -1°C , Գավառում՝ -2°C), Սյունիքի նախալեռներում՝ $+4...+6^{\circ}\text{C}$, Արագածոտնի, Կոտայքի, Վայոց Ձորի նախալեռներում՝ $+5...+8^{\circ}\text{C}$, Տավուշում՝ $+8...+9$ (Դիլիջանում՝ 0°C), Սյունիքի հովիտներում, Արարատյան դաշտում և Երևանում՝ $+8...+11$ աստիճան:

Ապրիլի 21-ին Աշոցքում դիտվել է կարկուտ ծմմ, Իջևանում՝ 11մմ տրամագծով: Ապրիլի 22-ին Իջևանում դիտվել է կարկուտ 10մմ տրամագծով: Առանձին օրեր առանձին շրջաններում դիտվել է քամի՝ 8-18մ/վրկ, պողոթյունները՝ մինչև 16-24մ/վրկ արագությամբ:

Ապրիլի 26-ի դրությամբ ձյան ծածկը պահպանվում է 2500մ-ից բարձր շրջաններում:

Շաբաթվա ընթացքում շարունակվել են գյուղատնտեսական աշխատանքները, եղանակային պայմանները նպաստավոր են եղել դաշտային աշխատանքներն իրականացնելու համար:

Լեռնային շրջաններում կատարվել է գարնանացան գարու ցանք, Գյումրիում և Սիսիանում հատիկը կտցել է: Նախալեռնային շրջաններում և Գյումրիում աշնանացանը թփակալել է, Մարտունիում գտնվել է հանգուցային արմատների, Եղվարդում և Մասրիկում ցողունակալման փուլերում, Մերձավանում առաջացել է ծեղացորենի ներքին հանգույցները:

Արարատյան դաշտում շարունակվել է ծիրանենու պտուղների ձևավորումը, խաղողի դաշտերում կատարվել է միջշարքային փխրեցում, Մերձավանում առաջացել է ծաղկաբույլերը: Դաշտերում և այգիներում կատարվել են ոռոգման և թունաքիմիկատներով մշակման աշխատանքներ:

Ապրիլի 19-20-ին, 23-ին հանրապետության գետերում դիտվել է փոփոխական ռեժիմ, ապրիլի 21-22-ին գետերում դիտվել է ջրի ելքերի մեծացում, իսկ ապրիլի 24-26-ին՝ նվազում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում բարձրացել է 2սմ-ով և կազմել՝ 1900.72մ (25.04.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 18 սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Լ.Ագիայան